

Կանոնակարգ

ուսանողի՝ անհատական ուսուցման փոխադրման

1. Անհատական ուսուցումը ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, որը հնարավորություն է տալիս ուսանողին ուսումնական պլանով նախատեսված առարկաները յուրացնել ինքնուրույն:
2. Անհատական ուսուցման կարող են անցնել ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն ունեցող նախավերջին կամ ավարտական կուրսերի ուսանողները:
3. Անցումն անհատական ուսուցման կատարվում է 1 տարի ժամանակով:
4. Անցումն անհատական ուսուցման տվյալ ուսանողի համար (բուհի դրական կարծիքի ներկայացմամբ) կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ:
5. ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությունը ստանալու համար ուսանողի դիմումը (կից համապատասխան փաստաթղթերով) քննարկվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և ռեկտորատի նիստերում: Հավանության դեպքում բուհը դիմում է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:
6. Անհատական ուսուցման անցման համար պարտադիր է ներկայացնել փաստաթուղթ տվյալ ուսանողի համար աշխատանք երաշխավորող (մասնագետի պահանջ ունեցող) հաստատությունից կամ օլիմպիական կոմիտեից (ֆեդերացիայից):
7. Ընթացիկ ուսումնառության համար տվյալ ուսանողի համար սահմանվում է անհատական ժամանակացույց (գրաֆիկ), որը վավերացվում է ուսանողի, թողարկող ամբիոնների, դեկանի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:
8. Ուսուցման անհատական ժամանակացույցում սահմանվում են ուսումնական պլանով նախատեսված առարկաները, նրանց ժամաքանակը՝ ըստ պլանի և ըստ անհատական ժամանակացույցի, ստուգարքները և քննությունները, միջանկյալ խորհրդատվություններ, ստուգումներ և հանձնարարություններ ստանալու համար բուհ ներկայանալու օրերը:
9. Ըստ ուսուցման անհատական ժամանակացույցի՝ նախատեսվում է ուսանողի այցելություն բուհ՝ առնվազն ամիսը 1 անգամ (մասնակի դեպքերում ենթակա է փոփոխության):
10. Ուսուցման անհատական ժամանակացույցում քննաշրջանի ժամանակաշրջանի փոփոխություն տեղի չի ունենում:
11. Ուսուցման անհատական ժամանակացույցում նախատեսված խորհրդատվությունների ժամաքանակը պետք է կազմի ուսումնական պլանով նախատեսված ծավալի 25 %-ը:
12. Անհատական ուսուցումը կարող է կասեցվել քննաշրջանի անբավարար արդյունքների դեպքում, հրավիրող հաստատության որոշմամբ կամ ուսանողի ցանկությամբ: